# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2016 թվականի N 23

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգավան համայնքի ավագանու նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ՝

1.Այգավան համայնքի 2016թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

2. Համայնքում հողի հարկի արտոնություն տալու մասին:

3.Մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական վճարների չափի սահմանում:

4.Այգավան համայնքի 2017թ-ի տեղական տուրքերի և վճարների մասին:

5.Համայնքապետարանի համար ձեռք բերված գույքը հիմնական միջոցների ցանկում ընդգրկելու մասին:

6.Այգավան համայնքի սեփականության գույքի գույքագրման արդյունքների հաստատման մասին:

7.Այգավան համայնքի 2016թ-ի 10 ամիսների բյուջեի եկամուտների կատարողականի հաղորդում:

8. Այգավան համայնքի ավագանու կանոնակարգի ընդունում:

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ

3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ

4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ

7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ

8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

9. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.Տ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
15 նոյեմբերի 2016 թվականի N 24-Ն

### ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով.

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Բյուջեի եկամուտների մասում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1. Գույքահարկ փոխադրամիջոցներից պլանը ավելացնել 1100.0, /մեկ միլիոն հարյուր հազար/ դրամով հաստատել պլանը 5707.000/հինգ միլիոն յոթ հարյուր յոթ հազար/դրամ, Այլ ոչ հարկային եկամուտներից հաստատված 1600.0/մեկ միլիոն վեց հարյուր հազար/ դրամով, պակասեցնել 1100.0/մեկ միլիոն հարյուր հազար/դրամով:

Պլանը հաստատել 500.0/հինգ հարյուր հազար/ դրամ:

2.01-01-01-51 Կառավարման մարմնի պահպանում 4111 հոդվածից տալ 70000 /յոթանասուն հազար/ դրամ տալ 08-05-01-55 Հանգիստ մշակույթ և կրոն 4239 հոդվածին:

3. 01-01-01-51 Կառավարման մարմնի պահպանում 4111 հոդվածից 20000/քսան հազար/դրամ տալ 01-01-01-51 Կառավարման մարմնի պահպանում 4232 հոդվածին:

4. 01-01-01-51 Կառավարման մարմնի պահպանում 4111 հոդվածից 200000/երկու հարյուր հազար/ դրամ տալ 01-01-01-51 Կառավարման մարմնի պահպանում 4261 հոդվածին:

5. 01-01-01-51 Կառավարման մարմնի պահպանում 4111 հոդվածից 122000/մեկ հարյուր քսաներկու հազար/ դրամ տալ 09-04-01-55 Կարիքավոր ընտանիքների բարձրագույն կրթություն 4729 հոդվածին:

6.Կառավարման մարմնի պահպանում 01-01-01-51 4111 հոդվածից 200000 /երկու հարյուր հազար/ դրամ տալ 06-06-01-55 ջրային կառույցների շահագործում և պահպանում 4213 հոդվածին:

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ

3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ

4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ

7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ

8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

9. ՔԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2016 թվականի N 25

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 17 սեպտեմբերի 2009թ-ի N1066-Ն որոշումով, ինչպես նաև «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի գ) ենթակետով.

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Վարելահողի վրա խաղողի նորատունկ այգի հիմնած համայնքի բնակիչներ Արմենակ Մխիթարյանին և Հակոբ Սաֆարյանին 2017թ-ի հունվարի 1-ից մինչև 2020թ-ի դեկտեմբերի 31-ը ազատել հողի հարկից:

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ

8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

9. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2016 թվականի N 26

## ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19 կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել «Ժպիտ» մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական գումարը յուրաքանչյուր երեխայի համար 4000/չորս հազար/ դրամ ամեն ամիս:

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7.ՂԱԶԱՐՅԱՆ ՄՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

կ.տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2016 թվականի N 27-Ն

## ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգավան համայնքում 2017թ-ի համար սահմանված տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝ համաձայն հավելված թիվ 1-ի.

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՄՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ՔԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

կ.տ.

Հավելված թիվ 1
ՀՀ Արարատի մարզի Այգավան
համայնքի ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 15 –ի թիվ 27-Ն որոշման

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ

2017թ-ի համար սահմանել հետևյալ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ մինչև 10000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 36000 դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 36000 դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր

մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը

սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 250 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000 դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 15.000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25.000 դրամ:

5[1]. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 1 000 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 110 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.

ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

8.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

8.1. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

9.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 2000 դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 դրամ:

10.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ:

11. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ.

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 Հայաստանի Հանրապետության դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2016 թվականի N 28

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի 11-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Ձեռք բերված հեռուստացույցը /SAMSUNG PS42b450b1/ ընդգրկել հիմնական միջոցների ցանկում:

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2016 թվականի N 29

## ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգավան համայնքի գույքի գույքացուցակները՝ համաձայն հավելված թիվ 2-ի:

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

կ.տ.

Հավելված թիվ 2
ՀՀ Արարատի մարզի Այգավան
համայնքի ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 15 –ի թիվ 29 որոշման

## ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Գույքագրման անցկացման հիմքը

(համար և ամսաթիվ) Կարգադրություն թիվ 21 09.11.2016թ.

(Հրաման, որոշում, կարգադրություն)

Գույքագրումը սկսելու ամսաթիվը 10.11.2016 թ

Գույքագրումն ավարտելու ամսաթիվը 14.11.2016թ

Հիմնական միջոցներ

Գտնվելու վայրը ի. Այգավան

Գույքագրման սկզբում հիմնական միջոցների մուտքի և ելքի բոլոր փաստաթղթերը հանձնված են հաշվապահություն: Իմ (մեր) պատասխանատվությամբ ստացված բոլոր հիմնական միջոցները մուտքագրված են , իսկ բաց թողնվածները՝ ելքագրված:

| Հերթական համար | Օբյեկտի անվանումը և համառոտ բնութագիրը | Թողարկման (կառուցման) ամսաթիվը | Համարը | | | Փաստացի առկայությունը | | Հաշվապահական հաշվառման տվյալները | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Գույքային | Գործարանային | Անձնագրի | քանակը | Արժեքը (դրամ) | քանակը | Արժեքը (դրամ) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | | | | | | | | | |
| 1 | Համ. շենք | | | | | | | 1 | |
| 2 | Մշակ. տուն | | | | | | | 1 | |
| 3 | Ավտո.Word focus | | | | | | | 1 | |
| 4 | Խորհրդակցական սեղան | | | | | | | 1 | |
| 5 | Գրասեղան | | | | | | | 1 | |
| 6 | Կաշվից բազկաթոռ | | | | | | | 1 | |
| 7 | Կաշվից աթոռ | | | | | | | 2 | |
| 8 | Փայտից աթոռ | | | | | | | 10 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գրապահարան | | | | | | | 1 | |
| 10 | Դրոշ | | | | | | | 1 | |
| 11 | Սեղանի հեռախոս | | | | | | | 1 | |
| 12 | Ջահ | | | | | | | 2 | |
| 13 | Գրասեղան | | | | | | | 1 | |
| 14 | Գրասենյակային կաշվից բազկաթոռ | | | | | | | 1 | |
| 15 | Աթոռ | | | | | | | 2 | |
| 16 | Գրասեղան | | | | | | | 2 | |
| 17 | Աթոռ փայտից | | | | | | | 3 | |
| 18 | Աթոռ կաշվից | | | | | | | 1 | |
| 19 | Պահարան չիրկիզվող և հրկիզվող | | | | | | | 2 | |
| 20 | Էլ. ջեռուցիչ | | | | | | | 1 | |
| 21 | Կախիչ | | | | | | | 1 | |
| 22 | Հայելի | | | | | | | 1 | |
| 23 | Գրասեղաններ | | | | | | | 5 | |
| 24 | Համակարգիչներ | | | | | | | 3 | |
| 25 | Աթոռ փայտից | | | | | | | 7 | |
| 26 | Բազմոց | | | | | | | 1 | |
| 27 | Պատ պահարան | | | | | | | 1 | |
| 28 | Չհրկիզվող պահարան | | | | | | | 2 | |
| 29 | Աթոռներ կաշվից | | | | | | | 2 | |
| 30 | Էլ. Վառարաններ | | | | | | | 3 | |
| 31 | Ժամացույց | | | | | | | 1 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Սեղան լրագրի | | | | | | | 1 | |
| 33 | Գրասեղան | | | | | | | 1 | |
| 34 | Հագուստի պահարան | | | | | | | 1 | |
| 35 | Օֆիսի բազմոց | | | | | | | 1 | |
| 36 | Աթոռ | | | | | | | 1 | |
| 37 | Էլ.ջեռոց | | | | | | | 1 | |
| 38 | Բազմոց, բազկաթոռներ | | | | | 1 | | 1 | |
| 39 | Խմելու ջրի սառեցման ապարատ | | | | | 1 | | 1 | |
| 40 | Հեռուստացույց SAMSUNG PS42b450b1 | | | | | 1 | | 1 | |
| | Ընդամենը | | | | | | | 72 | |

Հանձնաժողովի նախագահ

Աշխատակազմի քարտուղար (պաշտոնը) (ստորագրություն) Մ.Դավթյան (ա.ա)

Հանձնաժողովի անդամներ Մշակույթի տան տնօրեն (պաշտոնը) (ստորագրություն) Հ.Մինասյան (ա.ա)

Առաջատար մասնագետ (պաշտոնը) (ստորագրություն) Կ.Գրիգորյան (ա.ա)

Գործավար (պաշտոնը) (ստորագրություն) Մ.Ռսկանյան (ա.ա)

Գույքագրման ցուցակում N1 ից մինչև N 40 ը թվարկված բոլոր հիմնական միջոցների փաստացի առկայությունը ստուգված և ցուցակում գրանցված է իմ (մեր ) ներկայությամբ, որի հետ կապված գույքագրման հանձնաժողովի նկատմամբ ոչ մի բողոք չունեմ (չունենք): Ցուցակում նշված հիմնական միջոցները գտնվում են իմ (մեր ) պատասխանատու պահպանության ներքո:
Հիմնական միջոցների պահպանման համար
Ցուցակում նշված տվյալները և
հաշվարկները ստուգեց

*Գլխավոր հաշվապահ* (պաշտոնը) (ստորագրություն) *Լ.Սահակյան* (ա.ա)

Համայնքի ղեկավար (ստորագրություն) Վ.Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2016 թվականի N 30-Ն

## ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ-Ի 10 ԱՄԻՍՆԵՐԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Ընդունել գիտություն համայնքի 2016 թ բյուջեի եկամուտների կատարողականը հետևյալ կերպ՝

| | Պլան | Փաստացի | Կատարողական |
|---|---|---|---|
| Հողի հարկ | 15200.0 | 7891.052 | 51.91 |
| Գույքահարկ փոխադրամիջոցներ | 4607.0 | 4748251 | 103 |
| Գույքահարկ շենք շինություն | 350.0 | 248.887 | 71.11 |
| Հողի վարձավճար | 1050.5 | 845.807 | 80.51 |
| Այլ ոչ հարկայի եկամուտներ | 1600.0 | 234.100 | 0.15 |
| Ծխախ. խմիչ. վաճ.թույլտ. տեխն.հեղ.հեղուկ գազեր | 610.0 | 434.100 | 71.16 |
| Ընդամենը | 23417.500 | 14.402.197 | 61.51 |

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ

3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ

4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ

7.ՂԱԶԱՐՅԱՆ ՄՈՍ

8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

9. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2016 թվականի N 31

## ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1) կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1.Ընդունել Այգավան համայնքի ավագանու կանոնակարգը:
2.Ուժը կորցրած ճանաչել 23.11.2012 թ-ի ավագանու նիստի թիվ 6 արձանագրության ավագանու կանոնակարգի մասին որոշումը:

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

կ.տ.